

Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հաստատության դաստիարակի և ֆիզկուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

1.Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջների:

2.Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջների:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքի համար սահմանված է 0.5 դրույք,
Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի հաստիքի համար սահմանված է 0.585 դրույք:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (2և 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի
Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները
ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման
վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող
փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

**Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի փետրվարի 10–ից մարտի 10–
ը ներառյալ՝** ամեն օր ժամը 9:00 - 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից,
ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 4 մանկապարտեզ>>
ՀՈԱԿ-ում:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝
ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2022թ-ի № 471-Ա/2 հրամանի մշակված
հարցաշարերի (<https://escs.am/am/news/11978>):

**Մրցույթը տեղի կունենա մարտի 17-ին ժամը 11:30 –ին <<Արթիկի թիվ 4
մանկապարտեզ>> ՀՈԱԿ- ում /հասցե ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք
քաղաք Արթիկ Ղարիբջանյան 1-ին նրբ, շ. 5**

Մրցույթին մասնակցող քաղաքացիները կարող են հայտարարությանը
հետևել www.azdarar.am, www.artik.am կայքերում:

Տեղեկությունների համար զանգահարել +374 98 18 81 13

Տնօրեն՝ Հասմիկ Տոնոյան

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Ղարիբջանյան
1-ին նրբ, շ. 5

Էլ. փոստ՝ 4ndhoak@mail.ru